ԼՈՒՍԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ «ԲԵՐԴԱԽԱՂ»-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դերային խաղը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հիմնական խաղային գործունեությունն է: Դերային խաղերում, վերարտադրելով մեծահասակներին հատուկ գործողությունները, երեխան յուրացնում է հասարակական հարաբերությունների և նորմերի մոդելները: Երեխայի տարիքային աճի հետ մեկտեղ զարգացում է ապրում նաև նրա դերային խաղի սյուժեն: Խաղի սյուժետային բովանդակությունը մեծապես կախված է նաև սոցիոմշակութային գործոններից և էթնիկական առանձնահատկություններից: Այսպես օրինակ հայ ժողովրդական խաղերում հիմնականում գերակշռում են ռազմական, մրցակցային, անասնապահական, հողագործական բովանդակությունները, որոնցից շատերը հիմնված են խաղային համագործակցության վրա: Իսկ, ինչպես հայտնի է, համագործակցության յուրացումը երեխայի սոցիալ-հոգեբանական հասունացման գլխավոր պայմաններից մեկն է: Հայկական ժողովրդական խաղերում միշտ կարևորվել է երեխաների ֆիզիկական զարգացումն ու դաստիարակումը, սակայն պետք է նշել նաև դրանց կարևորությունը երեխայի հոգեկան զարգացման գործընթացում: Հենց այս նպատակով կրտսեր դպրոցական տարիքի երեխաների խմբում կատարվեցին էմպիրիկ ուսումնասիրություններ, որոնց գործնական կիրառման վերլուծությունը ներկայացված է տվյալ աշխատանքում: Ուսումնասիրության առարկան հայ ժողովրդական «Բերդախաղի» դերն է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեկան զարգացման գործընթացում: Ուսումնասիրության խնդիրն է դերային բերդախաղի միջոցով երեխաների խմբային համագործակցության և միջանձնային փոխհարաբերությունների զարգացման հետազոտումը: Փորձարարական աշխատանքները կատարվել են Հանրապետական Մանկական Վերականգնողական Կենտրոնի Ինտեգրացիոն մանկապարտեզում Ընտրվեցին 5,8-ից 7 տարեկան 20 երեխաներ (6 աղջիկ և 14 տղա), որոնք բաժանվեցին երկու հավասար խմբերի: Այս խմբերը համարակալվեցին 1 և 2 համարներով: Երկու խմբի երեխաները մեկ ամսվա ընթացքում շաբաթական երեք անգամ մեկուկես ժամով գալիս էին խաղահրապարակ(միմյանց չխանգարելու նպատակով, խմբերը հրավիրվում էին տարբեր ժամերի): Երկու խմբերի երեխաների վարքը ուսումնասիրվում էր նաև խաղային ժամերից դուրս մանկապարտեզի առօրյա կյանքում: Թիվ 1 խմբում խաղում էին բազ-

մառճ և բազմաբովանդակ տարբեր ազգերի խաղեր, ինչպիսիք են՝ «Գետնից բարձր», «Քարանձավ», «Բռնցի», «Չլոցի», «Անուն գոռոցի», «Горох за горох» և այլն: Հանդիպումը բաղկացած էր 3 հիմնամասերից՝ 1. խաղի ընտրություն, 2. խաղի կանոնների բացատրում, 3. բուն խաղային գործընթաց: Թիվ 2 խումբը խաղում էր հայ ժողովրդական «Բերդ» խաղը (տարբեր մարզերում անվանվում էր նաև «Կտրոց», «Օբա», «Ղուռ», «Բըռ», «Նամ-նամ բուդիկ»), որը դեռևս միջնադարից մեծ տարածում ուներ Սասունում, Լոռիում, Մարաշում, Էջմիածնում, Վանում, Բայազետում, Կոտայքում, Ախալքալաքում և այլուր: Տարբեր շրջաններում խաղը որոշակի փոփոխություններ էր կրում, հետևաբար հանդիպումների ժամանակ խաղարկվում էին «Բերդախաղի» տարբեր տեսակները: Ահա «Բերդախաղի» որոշ տեսակների նկարագրությունները՝

1. «Խաղահրապարակում փայտով կամ քարով հողի վրա մի շրջան է գծվում, որի մեջտեղում մեծ քար կամ լաթ է դրվում, որն էլ բերդ է անվանվում: Երեխաները բաժանվում են երկու հավասար խմբերի: Վիճակահանության միջոցով մի խումբը դառնում է բերդը պաշտպանող զինվորների խումբ, իսկ մյուսը՝ հարձակվող զինվորների: Շրջանի շուրջը շարվելով՝ պաշտպանող խումբը փորձում է թույլ չտալ հակառակորդին «ներխուժել բերդ», այսինքն՝ դիպչել շրջանի կենտրոնում դրված քարին, իսկ հարձակվող զինվորների խումբը, խափուսիկ հնարքների դիմելով, փորձում է ներխուժել կենտրոն և «գրավել բերդը»: Կանոններ՝ 1. հարձակվող զինվորը համարվում է մահացած և դուրս է գալիս խաղից, եթե նրան դիպչում է պաշտպանող զինվորներից որևէ մեկը, 2. պաշտպաններից ոչ ոք իրավունք չունի կանգնել «բերդի» անմիջապես կողքը կամ վրան, 3. խաղացողները իրավունք չունեն հարվածելու հակառակորդներին»: [1]

2.«Խաղակենտրոնում դրված քարը Չարսանճագում «բերդ» է կոչվում: Պաշտպանները հարձակվողներին շարքից դուրս հանելու նպատակով հետապնդում և ձեռքով դիպչում էին նրան: Բայց այն պաշտպանը, որը հետապնդելիս հարձակվողների կողմից առնվում էր շրջանի մեջ, նույնպես չեզոքացվում էր: Բոլորակի մեջ առնելով այդ չեզոքացումը «կըյրել» էր կոչվում»: [1]

3. Բերդախաղի մեկ այլ տեսակ է նաև «Բերդավոր գնդակ» խաղը. «Տղաները գետնի վրա գծում էին մի փոքրիկ շրջգիծ կամ քառակուսի շրջանակ և նրա կենտրոնում տեղավորում մի մեծ քար, որն անվանում էին «բերդ»: Խաղին մասնակցողները բաժանվում էին երկու հավասար խմբերի և ընտրում իրենց համար հրամանատարներ, որոնք վիճակի միջոցով որոշում էին խմբերի դերերը: Բերդը պաշտպանողների խումբը անկանոն ձևով տարածվում էր բերդից բավական հեռու, իսկ գրավողները կանգնում էին բերդին մոտիկ: Վերջիններիս հրամանատարը իր ձեռքի գնդակը գցում էր վերև, իսկ պաշտպանողներն աշխատում էին օդում բռնել և գետնին խփել, կամ վայր ընկնելու

դեպքում, վերցնել գետնից և անմիջապես խփել բերդին: Եթե չէր հաջողվում բռնել կամ գետնից վերցնելով կպցնել բերդին, խաղը շարունակում էին միևնույն ձևով: Իսկ եթե հաջողվում էր, երկու դեպքում էլ գրավողների հրամանատարը խաղից դուրս էր գալիս: Նրան փոխարինում էր միևնույն խմբից մեկ ուրիշը, որը դարձյալ գնդակը գցում էր վերև, պաշտպանողները բռնում էին: Եթե խփում էին բերդին, այս հրամանատարը ևս դուրս էր գալիս, որին դարձյալ փոխարինում էր ուրիշը և այսպես շարունակ: Երբ գրավողների խմբի բոլոր անդամները դուրս էին գալիս, խաղախմբերը փոխում էին իրենց տեղերը»: [1]

4. «Սասունում մասնակիցների թիվը հասնում էր 20-40-ական հոգու: «Բըռ» էր կոչվում այն մեծ քարը, որը բերդի դեր էր կատարում: Այն դրվում էր հարթ կամ թեք դաշտում: Պաշտպանվող խմբից մեկ հոգին բերդապահ էր նշանակվում: Մյուսները հետապնդում էին հարձակվողներին: Խաղն սկսվում էր բոլոր կողմերից՝ -հարձակվողների ղեկավարի բարձրաձայն ազդանշանով: Պաշտպանվողները, որ մեծ շրջանակով, իրարից 5-10 քայլ հեռու կանգնած աչալուրջ հսկում էին, իրավունք ուներին թշնամուն ձեռք տալով «մեռցնել»՝ շարքից հանել: Հարձակվողին հաջողվում էր անցնել պաշտպանվողների թիկունքը և անվնաս խույս տալ, բըռի պաշտպանը շարքից դուրս էր գալիս: Դրսեցիները խաղը շահում և խմբերի դերերը փոխում էին բըռին ոտք դնելու դեպքում: Պայքարը շարունակվում էր մինչև վերջին մեկական մարտիկներից մեկի պարտությունը»: [1]

Չնայած այն հանգամանքին, որ պատմականորեն այս խաղում ընդգրկվել են միայն տղա երեխաները, տվյալ փորձարարական աշխատանքում ընդգրկվեցին նաև աղջիկներ, և պետք է նշել, որ խաղում երեխաները միմյանց միջև սեռային տարբերություններ չէին մտցնում: Թիվ 2 խմբի հանդիպումները բաղկացած էին չորս հիմնամասերից՝ 1.խաղի որևէ ձևի ընտրություն, 2. խաղի կանոնների բացատրում, 3. բուն խաղային գործընթացը, 4. խաղի արդյունքների վերլուծում: Առաջին անգամ խաղը վերլուծելիս երեխաներին բացատրվեց, որ միայն ճարպկությունը բավական չէ՝ հաղթանակելու համար: Խաղացողները պետք է միավորվեն և սովորեն հասկանալ և շարունակել միմյանց գործողությունները: Հաջորդ հանդիպումների արդյունքները վերլուծելիս՝ երեխաները ինքնուրույն փորձում էին վերլուծել, թե ինչպիսի արդյունավետ գործողությունների շնորհիվ մի թիմը հաղթեց և որ բացթողումների պատճառով մյուս թիմը պարտվեց և ինչ է պետք անել՝ սխալները ուղղելու համար: Այժմ դիտարկենք փորձարարական աշխատանքի ամբողջ ընթացքում կատարված ուսումնասիրությունների ամփոփումն ըստ շաբաթների.

Առաջին շաբաթվա ընթացքում թիվ 1 խմբի երեխաների վարքում փոփոխություն չէր նկատվում: Սակայն թիվ 2 խմբի երեխաները առավել հաճախ միմյանց հետ էին շփվում,քան մյուս խմբի երեխաների՝միևնույն ժամանակ

չխուսափելով նրանցից: Նկատելիորեն աճել էր նաև թիվ 2 խմբի երեխաների ուշադրությունը միմյանց հանդեպ,որն արտահայտվում էր ինչպես կենցաղային, այնպես էլ խաղային շփումներում: Երկրորդ շաբաթվա ավարտին թիվ 1 խմբում արդեն գոյացել էին կայուն միկրոխմբեր՝ բաղկացած երկուսից չորս երեխաներից: Այս խմբերի երեխաները ժամանակի մեծ մասն անց էին կացնում միասին: Որոշ երեխաներ չէին ընդունվում միկրոխմբերի կողմից, իսկ ոմանք էլ խմբից խուսափ էին անցնում: Խմբի անդամների միջև հաճախ նաև սուր կոնֆլիկտներ էին ծագում հիմնականում խաղալիքների և ճաշասենյակում միմյանց կողք նստելու վերաբերյալ: Խմբում ի հայտ էր եկել նաև առաջատար լիդեր: Ի հակառակ թիվ 1 խմբի, թիվ 2 խմբում ակնհայտ առաջատար չկար. խմբում կային մի քանի լիդերներ, որոնք հերթականությամբ կատարում էին առաջատարի ֆունկցիաները: Հատկանշական է նաև, որ մինչ փորձարարական աշխատանքի սկիզբը թիվ 2 խմբի եոկու տղա լիդերների միջև տևական կոնֆլիկտը ուսումնասիրությունների երկրորդ շաբաթվա ավարտին լիովին հաղթահարված էր: «Բերդախաղում» կրած պարտությունից հետո երեխաները ինքնուրույն որոշել էին քննարկել և շտկել իրենց խնդիրը: Երեխաները առավել հանդուրժողական էին դարձել միմյանց հանդեպ: Եվ քանի որ խաղի խմբային կազմերը յուրաքանչյուր խաղից հետո փոփոխվում էին, երեխաները իրենց հակառակորդային դերերը չէին պրոյեկտում իրենց իրական միջանձնային հարաբերությունների վրա: Երկու խմբերի երեխաները առօրյա բազմաժամյա շփումներ էին ունենում միմյանց հետ, և այդ շփումների դիտարկումները երրորդ շաբաթվա ժամանակաշրջանում ցույց տվեցին, որ նույնիսկ միջանձնյա հարաբերություններում ծագող կոնֆլիկտային իրադրություններում թիվ 2 խմբի երեխաները միմյանց հետ սուր բախումներ չէին ունենում: Այս խմբում չէին ձևավորվում նաև կայուն միկրոխմբեր: Միևնույն խաղալիքով միասին խաղալու ցանկության դերքում առաջին խմբի երեխաների մեծամասնությունը զիջում էր իր միկրոխմբի երեխաներին, իսկ երկրորդ խմբի երեխաների տասից վեցը երկու խմբերը ներկայացնող երեխաներին էլ ընդառաջում էին:

Ուսումնասիրության ժամկետի ավարտին թիվ 1 խմբում միջանձնային հարաբերությունները առավել զարգացած և կայուն էին խմբի ներսում հաստատված միկրոխմբերում: Թիվ 2 խմբի երեխաների միջև կայուն միկրոխմբեր չէին ստեղծվել: Խաղային փոխհամագործակցության շնորհիվ նրանք առավել համախմբված էին և առավել ուշադիր միմյանց հանդեպ: Այն հարցին, թե մանկապարտեզից ովքեր են քո ընկերները, կամ մանկապարտեզի երեխաներից ում կկանչեիր ծննդյանդ տոնին, երկրորդ խմբի տասը երեխաներից յոթը նշում էր իր խմբային խաղընկերներին, իսկ առաջին խմբի երեխաների մեծ մասը առաջին հերթին նշում էր իր միկրոխմբի անդամներին, այնուհետև նաև թիվ 2 խմբի որոշ անդամների: Պետք է նշել նաև, որ երկրորդ խմբի երեխաների

«Բերդախաղի» խաղային գործընթացը հասել էր բավականին բարձր մակարդակի: Եթե նախկինում նրանք բացականչություններով էին միմյանց խաղային հուշումներ կատարում, ապա երրորդ շաբաթվա ընթացքում նրանցից շատերը միմյանց ժեստերով կամ հայացքներով էին արդեն հասկանում, ինչը վկայում է խաղային և միջանձնային փոխըմբռնման և փոխհամագործակցության միանշանակ աճի մասին: Ինչպես հայտնի է, դերային խաղն արտացոլում է ոչ միայն երեխայի կենսափորձն ու նրա հոգեկան ապրումները, այլ նաև ձևավորում է նրան, որպես մշակույթի, հասարակական նորմերի կրող: Քանզի պատմականորեն հայ ժողովուրդը իր բազմադարյա գոյության ընթացքում ստիպված է եղել անընդմեջ պայքարել թշնամիների դեմ՝ իր գոյությունը պահպանելու համար, հետևաբար նաև հորինվել են այնպիսի խաղեր, որոնք մանկուց երեխաների մեջ թե՛ հոգեբանորեն և թե՛ ֆիզիկապես կկրթեին մարտիկների: Այդ խաղերի թվին է պատկանում նաև «Բերդ» խաղը: Հենց խաղի անվանումը երեխաների մոտ ասոցիացվում է պաշտպանության, միասնության՝ միախմբվածության հետ: Եվ տվյալ էմպիրիկ ուսումնասիրությունն ապացուցում է, որ երեխաների միջանձնային շփման և փոխհամագործակցության զարգացման գործընթացում հայ ժողովրդական խաղերը, տվյալ դեպքում «Բերդախաղը», բավականին արդյունավետ են ազդում: Ամփոփելով տվյալ փորձարարական աշխատանքը՝ կարելի է նշել, որ «Բերդ» խաղի շնորհիվ թիվ 2՝ խմբի երեխաների մոտ միջանձնային և ներխմբային հարաբերություններում դրական և կայուն զարգացում արձանագրվեց: Երախաները առավել հանդուրժողական և ուշադիր դարձան միմյանց հանդեպ: Նրանք հոգ էին տանում միմյանց մասին, և նույնիսկ նրանցից ոմանց վիճաբանության պարագայում մյուսները միջամտում և հաշտեցնում էին նրանց՝ հիշեցնելով, որ իրենք թիմ են և պետք է համերաշխ լինեն: Այս բոլոր տվյալները վկայում են, որ հայ ժողովրդական խաղերի ազդեցությունը երեխաների միջանձնային հարաբերությունների զարգացման գործընթացում բավականին մեծ և արդյունավետ է: Դրանք նպաստում են ոչ միայն երեխաների փոխըմբռնմանն ու փոխհամագործակցությանը, այլ նաև երեխայի մեջ այնպիսի անհատական հատկանիշների ձևավորմանը, ինչպիսիք են՝ ուշադրության կենտրոնացումը, տրամաբանությունը, փոխհանդուրժողականությունը, արագ կողմնորոշվելու և կամային բարձր հատկությունները: Տվյալ փորձարարական աշխատանքը ցույց է տալիս, թե որքան կարևոր է նման էմպիրիկ ուսումնասիրությունների դերը հայ ժողովրդական խաղերի հոգեբանական կողմի ուսումնասիրության հարցում:

Գրականություն

1. Վ. Բդոյան. Հայ ժողովրդական խաղեր II - Հայկական Սագա Հրատարակչություն Երևան 1980 - էջ 89